ՀՀ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Աշոտ Մարկոսյան՝, *Մակար Պետրոսյան*՝՝

Հոդվածում ներկայացվել են պարենային անվտանգության բնութագրերը, պարենային և նվազագույն սպառողական զամբյուղների արժեքներն ու դրանց բաղադրիչները, ՀՀ և ԼՂՀ բնակչության պարենային ապահովվածության մակարդակները, ՀՀ ազգային պարենային հաշվեկշռում ներառված կարևորագույն սննդամթերքի տեղական արտադրության և ինքնաբավության մակարդակի ցուցանիշները 2004-2009թթ., պարենամթերքի արտահանման ու ներմուծման ցուցանիշները:

ՀՀ նախագահի հանձնարարությամբ Ազգային անվտանգության խորհուրդը համապատասխան շահագրգիռ նախարարությունների և կազմակերպությունների ընդգրկմամբ մինչև 2010թ. աշունը ՀՀ նախագահի հաստատմանը պետք է ներկայացնի ՀՀ պարենային անվտանգության ռազմավարությունը: Ելնելով հիմնահարցի կարևորությունից և հրատապությունից՝ հեղինակները քննարկում են ՀՀ պարենային անվտանգության հայեցակարգի ձևավորման հիմնախնդիրները: Նրանց կարծիքով՝ ՀՀ պարենային անվտանգության ռազմավարությունը, որը ներկայումս մշակման փուլում է, պետք դառնա հետագա գործողությունների ծրագիր, որի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:

1. Զարգացման ուղու ընտրությունը

Պարենամթերքի արտադրության ապահովումը և բնակչության կարիքների բավարարումը սննդամթերքի նկատմամբ շարունակում են մնալ ժամանակակից պետության կարևոր գործառույթներից: Եվ եթե նախկինում այս հիմնախնդրի շուրջ քննարկումներ էին արվում ագրարային հատվածի կամ վերամշակող արդյունաբերության այս կամ այն հարցի շուրջ, ապա ներկայումս խոսվում է պարենային անվտանգության մասին, քանի որ պարենային անվտանգության հիմնախնդիրը ներառում է ոչ միայն ագրարային կամ վերա-

՝ ՀՀ կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր:
՝՝ Տնտեսական գիտությունների թեկնածու:

մշակող արդյունաբերության հատվածներն առանձին-առանձին, այլ նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ամբողջությամբ վերցրած:

Ընդհանրապես, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և, մասնավորապես, նրա այն հիմնահարցերը, որոնք վերաբերում են գյուղին, միշտ էլ գտնվել են ինչպես տեսաբան մասնագետների, այնպես էլ գործնականում տնտեսական քաղաքականություն կերտողների ուշադրության կենտրոնում: Նման մոտեցումը կապված է որոշակի խորքային և դեռևս լուծումը վերջնականորեն չստացած հիմնախնդիրների հետ: Հատկապես նախկին համայնավարական տնտեսական տարածքում շուկայական հարաբերություններին անցումն առաջ քաշեց կարևոր մի հարցի պատասխանի անհրաժեշտությունը. ինչպե՞ս դիտարկել գյուղը և նրա արտադրական բազան: Եթե այս հարցին պատասխան է տրվում բիզնեսի (գործարարության) շահերից ելնելով, ապա ակնհայտ է դառնում գյուղատնտեսական հումքի աճեցմամբ և դրա վերամշակմամբ չզբաղված մարդկանց հետ կապված ինչպես սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, այնպես էլ նրանց աշխատանքով ապահովելու և բազմաթիվ այլ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը: Զարգացած երկրներում գյուղական բնակչության 4-5%-ը կարողանում է ապահովել ոչ միայն տվյալ երկրի բնակչության պահանջը պարենի նկատմամբ, այլև արտահանել զգալի քանակությամբ սննդամթերք և գյուղատնտեսական հումք: Հայտնի է, որ պարենի արտադրության մեջ զբաղված ԱՄՆ ֆերմերները, որոնք կազմում են տվյալ երկրի բնակչության շուրջ 3%-ը, արտադրում են այնքան պարեն, որը բավականացնում է 2 մլրդ մարդ կերակրելու համար: Մյուս կողմից՝ բարձրարտադրողական աշխատանքը հարաբերականորեն «ավելորդ» է դարձնում գյուղական բնակչության մի ստվար մասին, որն էլ աշխատանք փնտրելու նպատակով տեղափոխվում է քաղաք: Այսպես, եթե 1990թ. քաղաքներում էր ապրում աշխարհի բնակչության 43%-ը, ապա 2007թ. այդ ցուցանիշը կազմել է 50%: Ըստ որում, ցածր եկամուտներով երկրներում այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 25 և 32, միջին եկամուտ ունեցող երկրներում՝ 39 և 48, այդ թվում միջինից ցածր երկրներում՝ 32 և 42, միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 69 և 75, ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում՝ 37 և 44 (իսկ բացարձակ թվերով՝ 1.580.9 և 2460.1 մլն մարդ), բարձր եկամուտ ունեցող երկրներում՝ 73 և 77 (բացարձակ թվերով՝ 671.1 և 800.9 մլն մարդ), այդ թվում եվրոյի գոտում՝ 71 և 73 [1]: Ասվածից հետևում է, որ աշխարհի զարգացած երկրներում առաջիկայում գյուղական վայրերում կպահպանվեն այնպիսի թվաքանակով մարդիկ, որոնք կապահովեն պարենի արտադրությունը:

Ինչպես և աշխարհի մյուս երկրներում, ՀՀ-ում ևս նկատվել է բնակչության ընդհանուր թվաքանակում գյուղական բնակչության թվաքանակի հարաբերական նվազում: Այսպես, 1926թ. ՀՀ բնակչության ընդհանուր թվա-

քանակի 81.0%-ը ապրել է գյուղական վայրերում, 1939թ. այդ ցուցանիշը կազմել է 71.4%, 1959թ.՝ 50.0%, 1970թ.՝ 40.5%, 1979թ.՝ 34.3%, 1989թ.՝ 31.3%, 1995թ.՝ 33.6%, 2000թ.՝ 35.1%, 2009թ.՝ 36.0% (բացարձակ արտահայտությամբ՝ 1164.6 հազ. մարդ) [2, էջ 54]: ՀՀ պայմաններում, ի տարբերություն աշխարհի մյուս, այդ թվում նաև անցումային երկրների, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածներն ունեն բարձր տեսակարար կշիռ: Այսպես, եթե 2004թ. ՀՀ տնտեսության մեջ զբաղվածների միջին տարեկան թիվը կազմել է 1081.7 հազ. մարդ, ապա գյուղատնտեսական (ներառյալ ձկնորսություն, ձկնաբուծություն) գործունեության մեջ զբաղվածները կազմել են 507.1 հազ. մարդ՝ գյուղացիական տնտեսություններում զբաղվածները՝ 501.6 հազ. մարդ: Ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածների թիվը 2004թ. կազմել է 574.6 հազ. մարդ (կամ զբաղվածների ընդհանուր միջին տարեկան թվաքանակի 53.1%-ը): Նշված ցուցանիշները 2008թ. կազմել են համապատասխանաբար՝ 1117.6 հազ. մարդ, 493.5 հազ. մարդ, 488.7 հազ. մարդ, 624.1 հազ. մարդ, 55.8% [2, էջ 54]: Բերված տվյալները վկայում են, որ ՀՀ-ում գյուղական բնակչությունն ավելի երիտասարդ է, քան քաղաքայինը: Հետևաբար, գյուղական այն բնակիչները, որոնք առաջիկայում կմտնեն աշխատունակ տարիք, լրացուցիչ պահանջներ են ներկայացնելու աշխատատեղերի նկատմամբ:

Ասվածի տեսանկյունից կարևորվում է պետության կողմից ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության իրականացումը, որը, օրինակ, Եվրոպական միությունում ընդունված է որպես գյուղատնտեսական արտադրանքի գների և սուբսիդիաների աջակցության համակարգ: ԵՄ երկրներում նշված քաղաքականության իրականացման արդյունքում ստեղծվեց գյուղատնտեսական հիմնական մթերքների ընդհանուր շուկա: ԵՄ ներսում գյուղատնտեսական արտադրանքի գները հիմնված են ընդհանուր «նպատակային» գների վրա: Երբ սահմանված նպատակային գները գերազանցում են համաշխարհային գներին, դրանց պաշտպանության համար օգտագործվում են ԵՄ կազմի մեջ չմտնող երկրներից ներմուծված գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ կիրառվող մաքսերը: Բացի այդ, ԵՄ-ում ստեղծվել է գների աջակցման ներքին համակարգ, որը հիմնված է նպատակային գներից փոքր չափով իջեցված գների վրա: Եթե, օրինակ, առաջարկի մեծությունը նպատակային գնի դեպքում գերազանցում է շուկայի հավասարակշիռ մակարդակը, ապա դրա ավելցուկը ԵՄ-ի կողմից գնվում է ավելի ցածր գնով, դրանով իսկ նախազգուշացնելով գերարտադրության ճնշումը գների ընդհանուր մակարդակի վրա: ԵՄ-ը աջակցում է նաև գյուղատնտեսական արտադրանքի գներին արտահանման սուբսիդիաների օգնությամբ, որով կարգավորվում է նաև ներքին շուկայում գյուղատնտեսական արտադրանքի առաջարկը: Գների աջակցման ծրագիրը ֆինանսավորում է գյուղատնտեսության զարգացման և երաշխավորման ԵՄ հիմնադրամը: ԵՄ-ում ընդունված է նաև գյուղատնտեսական արտադրության կատարելագործման և ռացիոնալացման մեթոդների համար ֆերմերներին տրվող օգնությունը [3, c. 86-87]:

Ասվածի կապակցությամբ որոշակի փոփոխությունների է ենթարկվել

նաև զարգացող՝ երկրների ինդուստրալացում (արդյունաբերականացում) հասկացությունը՝ որպես արդյունաբերության զարգացման հիմնական ռազմավարություն: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին տարիներին, ընդհուպ մինչև 1960-ական թվականները, շատ տնտեսագետներ կարծում էին, որ երկրի արդյունաբերականացումը թույլ զարգացած երկրների համար ամենահեռանկարային զարգացման ուղին է: Զարգացող շատ երկրների կառավարություններ, այդ դրույթն ընդունելով որպես գործողության ուղեցույց, ձեռնամուխ եղան մշակելու զարգացման ռազմավարություններ և պլաններ, որոնցում նախապատվությունը տրվում էր արդյունաբերական զարգացմանը: Շատ երկրներ տնտեսական քաղաքականության անկյունաքար դարձրին ներմուծման փոխարինումը, իսկ մյուսները նախապատվությունը տվեցին արտահանման խրախուսմանը: Թեև այդ ռազմավարության կիրառման արդյունքներն առանձին երկրներում հուսադրող էին (հատկապես այն երկրներում, որտեղ նախապատվությունը տրվեց արտահանման խրախուսմանը), սակայն երկրների մեծ մասում նման քաղաքականության արդյունքները միարժեք չէին կամ էլ հիասթափեցնող էին: Այդ երկրների մեծ մասը վերջին տարիներին փոխել է իր տնտեսական քաղաքականության ուղղությունը՝ առաջնությունը տալով գյուղատնտեսության զարգացմանը: Առանձին դեպքերում դժվարությունները պայմանավորված էին գյուղատնտեսության հաշվին արդյունաբերության մեջ չափից ավելի ներդրումային միջոցների ընդգրկմամբ, որը զարգացող երկրների տնտեսության առաջատար ճյուղն էր: Մյուս երկրներում պարզվեց, որ ինդուստրացման «գինը» շատ բարձր էր, քանի որ անհրաժեշտ էր սահմանել բարձրարդյունավետ հովանավորչական սակագներ մինչև այն ժամանակ, երբ տեղական արդյունաբերությունը կկարողանա մրցակցել ներմուծվող ապրանքների հետ: Հատկապես փոքր և աղքատ երկրների համար շատ դժվար էր ստեղծել կենսունակ արդյունաբերություն, քանի որ նրանց ներքին շուկաները շատ փոքր էին արդյունաբերական ձեռնարկությունների նվազագույն արդյունավետ չափերի համեմատությամբ: Առանձին երկրներում վճարային հաշվեկշռի էական բարելավում տեղի չունեցավ: Նրանց ներմուծման կառուցվածքը փոփոխվեց. պատրաստի սպառողական ապրանքների փոխարեն դրանցում գերակշռեցին սարքավորումները, հումքը և պահեստամասերը, իսկ կախվածությունը դեռևս շարունակում էր մնալ ուժեղ: Այդ երկրների ներսում եկամուտների բաշխումը դարձավ ավելի անհամաչափ, որը հանգեցրեց գյուղական վայրերից դեպի քաղաքներ արտահոսքի ավելացման, անխուսափելիորեն ավելացնելով քաղաքային գործազրկությունը և առաջ բերելով նոր քաղաքական հիմնախնդիրներ: Վերջին տարիներին ինչպես շատ տնտեսագետներ, այնպես էլ զարգացող երկրների կառավարություններ ավելի զգուշավոր են դարձել ինդուստրալացման քաղաքականության ակնհայտ թվացող առավելությունների նկատմամբ: Ներկայումս զարգացման շատ ռազմավարություններ նախապատվությունը տալիս են գյուղատնտեսությանը [3, c. 239]:

2. ՀՀ և ԼՂՀ բնակչության պարենային ապահովվածության մակարդակը

Պարենային անվտանգությունը պետության սոցիալ-տնտեսական համակարգի այնպիսի վիճակ է, որի ժամանակ երկրի յուրաքանչյուր քաղաքացի հնարավորություն ունի ձեռք բերելու նորմալ կենսապահովման նվազագույնի համար սննդամթերքի հավաքածու: Որպես կանոն, մարդու կողմից հիմնական սննդամթերքի տեսակների օրական սպառման նորմը և դրանց էներգետիկական գնահատականը մեզանում որոշվում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից: Ներկայումս ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԼՂՀ-ում բնակչության մեկ շնչի օրական էներգետիկան սահմանված է 2412.1 կկալ, և այդ նորմատիվը հիմք է հանդիսանում պարենային, ինչպես նաև նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի որոշման համար:

Աղյուսակ 1

Նվազագույն պարենային զամբյուղի արժեքը 2009թ. IV եռամսյակի միջին ընթացիկ գներով [4, էջ 202]

	Պարենամթերքի անվանումը	Օրական սպառման նորմը 1 շնչի հաշվով, կգ	Տարեկան սպառման նորմը 1 շնչի հաշվով, կգ	Օրական էներգետիկան 1 շնչի հաշվով, կկալ	Միավորի գինը, դրամ	Տարեկան նորմի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ
1	Հացամթերք	0,335		992,2		49089
այդ թվում՝						
1.1	հաց	0,25	91,3	622,5	308,6	28175,2
1.2	ալյուր	0,02	7,3	70,6	205,3	1498,7
1.3	մակարոնեղեն	0,015	5,5	55	418,3	2300,7
1.4	ձավարեղեն (բրինձ)	0,05	18,3	175,5	573,6	10496,9
1.5	ընդեղեն (լոբեղեն)	0,02	7,3	68,6	906,5	6617,5
2	Մսամթերք (տավարի միս)	0,1	36,5	203	1457,1	53184,2
3	Կաթնամթերք			339,7		49271,1
այդ թվում՝						
3.1	կաթ, լիտր	0,2	73	122	238,2	17388,6
3.2	կաթնաշոռ	0,01	3,7	7,5	1272,9	4709,7
3.3	կենդանական յուղ	0,02	7,3	143,4	2413,4	17617,8
3.4	պանիր	0,025	9,1	66,8	1050	9555
4	Կարտոֆիլ	0,25	91,3	167,5	159,3	14544,1
5	Բանջարեղեն (կաղամբ, գլուխ սոխ)	0,3	109,5	87	236	25842
6	Միրգ (խնձոր)	0,2	73	96	334,7	24433,1
7	Շաքար	0,05	18,3	193,5	350,7	6417,8
8	Ձու, հատ	0,5	182,5	40	55,6	10147
9	Բուսական յուղ	0,02	7,3	176,8	716,3	5229
10	Մարգարին	0,01	3,7	72	1148	4247,6
11	Ձուկ	0,03	11	44,4	1713,9	18852,9
	Ընդամենը			2412.1 կկալ		261257,8

Աղյուսակ 2-ում բերված է նվազագույն պարենային զամբյուղի արժեքը ՀՀ-ում (նաև ԼՂՀ-ում) 2009-ի IV եռամսյակի միջին ընթացիկ գներով: Աղյուսակի տվյալներից հետևում է, որ նվազագույն պարենային զամբյուղի մեջ ընդգրկված են հացամթերք (ներառում է 5 անվանում մթերք), մսամթերք, կաթնամթերք (ներառում է 4 անվանում մթերք), կարտոֆիլ, բանջարեղեն, մրգեր, շաքար, ձու, բուսական յուղ, մարգարին, ձուկ կամ ընդամենը 11 անվանում: Ամբողջ զամբյուղի տարեկան արժեքը կազմում է 261257.8 դրամ: Սպառման տարեկան նորմի արժեքի կառուցվածքի վերլուծությունը վկայում է, որ հացամթերքի բաժինը կազմում է ամբողջի 18.8%-ը (որից հացը՝ մոտ 11%), մսամթերքինը՝ 20.3%, կաթնամթերքինը՝ 18.9 (որից կաթը՝ 6.7%), կարտոֆիլինը՝ 5.6%, բանջարեղենինը՝ 9.9%, մրգինը՝ 9.3%, շաքարինը՝ 2.5%, ձվինը՝ 3.9%, բուսական յուղինը՝ 2.0, մարգարինինը՝ 1.6%, ձկանը՝ 7.2%: Այստեղից հետևում է, որ պարենային զամբյուղի մեջ մտնող հիմնական պարենամթերքները կարելի է արտադրել տեղում և դրանով ապահովել ինքնապահովման բարձր մակարդակ: Ըստ որում, պարենային զամբյուղի տարեկան կտրվածքով արժեքը կազմել է 261257.8 դրամ, ամսականը՝ 21771.5 դրամ, իսկ նվազագույն սպառողական զամբյուղի տարեկան կտրվածքով արժեքը կազմել է 404949.6 դրամ, ամսականը՝ 33745.8 դրամ (տե՛ս *Աղյուսակ 3*):

Աղյուսակ 2

Պարենային և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը [4, էջ 202]

Պարենային զամբյուղի արժեքը	
Տարեկան կտրվածքով	261257.8 դրամ
Ամսական կտրվածքով	21771.5 դրամ
Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը	
Տարեկան կտրվածքով	404949.6 դրամ (գործակից 1.55)
Ամսական կտրվածքով	33745.8 դրամ

Պետության պարենամթերքի պաշարները երկրի պետական պաշարների բաղկացուցիչն են, որը նախատեսված է պարենային ճգնաժամի կանխմանը կամ դրա հետևանքների վերացմանը: Պարենամթերքի ֆիզիկական մատչելիության գնահատման համար ՀՀ և ԼՂՀ ԱՎԾ տվյալների հիման վրա մեր կողմից հաշվարկվել է բնակչության պարենային ապահովվածության մակարդակը (*Աղյուսակներ 3 և 4*): Ուշադրության են արժանի հատկապես աղյուսակների վերջին 2 սյունակները, որտեղ բերված են ֆիզիոլոգիական ապահովվածության նորմերի մակարդակների հաշվարկները՝ կատարված սպառման ֆիզիոլոգիական նորմերի համեմատ տվյալ մթերքի ռեսուրսի տոկոսային հարաբերակցությամբ: Վերջին սյունակի հաջորդ ցուցանիշը՝ յուրաքանչյուր

մթերքի ինքնապահովման մակարդակն է, որը հաշվարկվել է ֆիզիոլոգիական նորմերի ընդհանուր պահանջմունքների նկատմամբ տվյալ մթերքի արտադրության տոկոսային հարաբերակցությամբ: Ինչպես երևում է բերված տվյալներից, հացի, մակարոնեղենի և ձվի սպառումը մոտ է ֆիզիոլոգիական նորմերին: Շաքարը 1.5 անգամ գերազանցում է այդ նորմը, իսկ միսը, ձուկը, կենդանական ճարպը, պանիրը և մարգարինը սպառվում են նորմից 3 մինչև 50 անգամ պակաս: Մսի, հացի և ձվի ինքնապահովման մակարդակը տատանվում է 80-100%-ի սահմաններում: Մակարոնեղենը, կենդանական ճարպը և պանիրը հանրապետությունում արտադրվում են փոքր ծավալներով, իսկ շաքար, բուսական յուղ և մարգարին ընդհանրապես չի արտադրվում: Մեր կարծիքով, ԼՂՀ-ում կան բոլոր անհրաժեշտ պայմանները զարգացնելու լճակային ձկնաբուծությունը և ավելացնելու կաթնամթերքների, հատկապես պանրի արտադրությունը:

Աղյուսակ 3

ՀՀ բնակչության պարենային ապահովվածության մակարդակը 2009թ.

Ուղղիությունը վերլուծության	Չափման միավոր	Ներմուծվող մթերքի ծավալը	Արտադրություն	Սպառում	Ընդհանուր ներմուծում	Ցանկալի սպառման նորմերի համեմատությամբ, %	Ներմուծվող մթերքի դիմաց ստացված միջոցներ, հազ. դրամ	Ներքին շուկայի ներմուծվող մթերքի գները, դրամ	Միջին ամսական դրամական վարձատրությունը, դրամ	Ինքնապահովման աստիճանը, %
Միս (տավարի)	տոննա	41147	10847,3	164,7	51829,6	16,2	36,5	116800	44,4	35,2
Հաց	տոննա	297627,4			297627,4	93,0	91,3	292160	101,9	101,9
Մակարոնեղեն	տոննա	2433,3	3287,	8,9	5712,2	1,8	5,5	17600	32,5	13,8
Ձու	մլն հատ	630,1	0,26	4,02	626,3	195,7	182,5 հատ	584000	107,3	107,9
Շաքար	տոննա	870	64824,4	0,05	65694,35	20,5	18,3	58560	112,2	1,5
Բուսական յուղ	տոննա	954,2	22416,1	2,1	23368,2	7,3	7,3	23360	100,0	4,1
Մարգարին	տոննա	241,6	13399,7	0	13641,3	4,3	3,7	11840	115,2	2,0
Ձուկ	տոննա	5858,6	2944,8	19,5	8783,9	2,7	11	35200	25,0	16,6
Կենդանական ճարպ	տոննա	1007,2	1782,8	0,16	2789,8	0,9	9,1	29120	9,6	3,5
Պանիր	տոննա	17459,3	587,5	376,9	17669,9	5,5	7,3	23360	75,6	74,7

Աղյուսակ 4

ԼՂՀ բնակչության պարենային ապահովվածության մակարդակը 2009թ.

Սննդի տեսակները	Չափման միավոր	Ներմուծված սննդամթերք	Արտադրություն	Արտադրանքում	Ընդամենը հասանելի	Բնակչության մեկ շնչի հաշվով հասանելիությունը, կգ	Ռացիոնալ ֆիզիոլոգիական նորմերով նախատեսված դրությամբ, կգ	Ռացիոնալ ֆիզիոլոգիական նորմերով սահմանված ընդհանուր ներմուծումը	Ֆիզիոլոգիական նորմի ապահովվածության մակարդակը	Ֆիզիոլոգիական նորմի ապահովվածության մակարդակը, %
Միս (տավարի)	տոննա	1646,1	205,4	143,8	1707,7	12,08	36,5	5161,1	33,1	31,9
Հաց	տոննա	12967,8	146,5	-	13114,3	92,74	91,3	12910	101,5	100,4
Մակարոնեղեն	տոննա	144,8	797,9	176,7	766	5,42	5,5	777,7	98,5	18,6
Ձու	մլն հատ	19,6	5,7	0,04	25,3	178,9	182.5 հատ	25,8	98,1	76,0
Շաքար	տոննա	-	4068,4	-	4068,4	28,8	18,3	2587,6	157,2	0,0
Բուսական յուղ	տոննա	-	831,4	-	831,4	5,9	7,3	1032,2	80,5	0,0
Մարգարին	տոննա	-	152,1	-	152,1	1,07	3,7	523,2	29,1	0,0
Ձուկ	տոննա	-	158,9	-	158,9	1,12	11	1555,4	10,2	0,0
Կենդանական ճարպ	տոննա	41,5	285,1	4	322,6	2,3	9,1	1286,7	25,1	3,2
Պանիր	տոննա	2,1	251,2	0,4	252,9	1,8	7,3	1032,2	24,5	0,2

ՀՀ-ում հացի (101.9%), ձվի (107.3%), շաքարի (112.2%), բուսական յուղի (100.0%), մարգարինի (115.2%), սպառումը համընկնում է (բուսական յուղի համար) կամ էլ գերազանցում է ֆիզիոլոգիական նորմերին: Ի տարբերություն ԼՂՀ-ի, որտեղ շաքարի սպառումը գերազանցում է ֆիզիոլոգիական նորմը 1.5 անգամ, ՀՀ-ում այդ ցուցանիշը կազմում է 112.2%: ՀՀ-ում ևս միսը (44.4%), մակարոնեղենը (32.5%), ձուկը (25.0%), կենդանական ճարպը (9.6%), պանիրը (75.6%) սպառվում են ֆիզիոլոգիական նորմից զգալիորեն պակաս: Միսը, մակարոնեղենը, շաքարը, բուսական յուղը, մարգարինը, կենդանական ճարպը ՀՀ-ում արտադրվում են փոքր քանակներով, իսկ ձվի արտադրությունը գերազանցում է սպառման ֆիզիոլոգիական նորմը:

Աղյուսակ 5

ՀՀ ազգային պարենային հաշվեկշռում ներառված կարևորագույն սննդամթերքի տեղական արտադրության և ինքնաբավության մակարդակի ցուցանիշները 2004-2009թթ.

Անվանումը	2004թ.		2005թ.		2008թ.		2009թ.		2004-2009թթ. միջինը	
	տոննա	%	տոննա	%	տոննա	%	տոննա	%	տոննա	%
Ցորեն	291,6	41,6	258,4	43,7	225,7	39,8	198,1	34,6	229,1	38,0
Կարտոֆիլ	576,4	99,7	564,2	99,9	648,6	99,9	593,6	100,9	583,7	99,9
Բանջարեղեն և բոստան. մշ.	713,6	102,2	781,6	101,7	1007,5	99,5	1035,9	100,0	917,5	100,6
Պտուղ և հատապտուղ	713,6	102,2	781,6	101,7	1007,5	99,5	1035,9	100,0	917,5	100,6
Խաղող	148,9	98	164,4	98,2	185,8	100,6	208,6	100,9	188,0	99,3
Հատիկա-ընդեղենային մշակաբույսեր	5,2	63,4	4,4	58,7	6,2	57,9	5,8	58,6	5,1	56,6
Բուսական յուղ	0,4	2,9	0,3	1,5	0,4	1,7	0,95	4,1	0,8	4,3
Շաքար	0,7	0,9	1,9	1,8	3,8	3,4	0,8	1,2	2,1	2,4
Ձու	31	108,4	28,5	101,8	31,7	99,7	34,7	99,8	30,0	101,4
Կաթ (բացի կարագից)	555,2	98	594,6	99,8	661,9	97,6	653	98,4	621,1	98,1
Տավարի միս (սպանդային քաշով)	33,4	73,9	34,4	76,8	49,3	72,6	49,6	78,9	41,4	77,8
Խոզի միս (սպանդային քաշով)	8,5	54,8	9,4	57,3	7,5	31,4	7,2	39,6	10,1	50,4
Ոչխարի և այծի միս (սպանդային քաշով)	7,2	100	7,6	100	7,4	100	8.9	129.0	7.2	104.8
Հավի միս (սպանդային քաշով)							5.0	13.9	5.4	20.0
Ընդամենը ինքնաբավության մակարդակը՝ էներգետիկ արժեքով հաշվարկված, %	4,3	24,3	4,6	18,7	6,7	14		60.3		58.5

Աղյուսակ 5-ում բերված են ՀՀ ազգային պարենային հաշվեկշռում ներառված կարևորագույն սննդամթերքի տեղական արտադրության և ինքնա-

բավության մակարդակի ցուցանիշները 2004-2009թթ.: 2004-2009թթ. միջին տվյալներով ցորենի (38.0%), բուսական յուղի (4.3%), շաքարի (2.4%), հավի մսի (20.0%) ինքնաբավության մակարդակը ցածր է 50%-ից: Ինքնաբավության մակարդակը 100%-ից բարձր է բանջարեղենի և բոստանային մշակաբույսերի (100.6%), ձվի (101.4%), ոչխարի և այծի մսի (104.8%) համար: Ընդամենը ինքնաբավության մակարդակը էներգետիկ արժեքով հաշվարկված 2004թ. 56.9%-ի փոխարեն 2009թ. կազմել է 60.3%, իսկ 2004-2009թթ. միջինով՝ 58.5%:

Ստորև բերված են ՀՀ և ԼՂՀ բնակչության մեկ շնչի հաշվով հիմնական գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների տվյալները: Քննարկվող ժամանակահատվածում ԼՂՀ-ում նկատվել է մսի, ձվի, բոստանային մշակաբույսերի, մրգերի և խաղողի, իսկ ՀՀ-ում՝ աղյուսակում բերված բոլոր գյուղատնտեսական հիմնական մթերքների արտադրության ավելացման միտում: Կաթի, ցորենի, բանջարանոցային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրությունը ԼՂՀ-ում համեմատաբար կայուն է:

Աղյուսակ 6/7

Գյուղատնտեսական հիմնական մթերքների արտադրությունը բնակչության մեկ շնչի հաշվով ԼՂՀ-ում ու ՀՀ-ում, կգ

Մթերքների տեսակները	2003	2004	2005	2006	2007	2008	2009
ԼՂՀ							
Միս (կենդանի քաշով)	29	31,4	27,0	29,0	32,7	29,5	35,3
Կաթ	225,3	235,9	235,4	229,1	219,1	224,5	228,9
Ձու, հատ	111,6	106,4	116,4	95,8	96,2	125,0	138,0
Հացահատիկային	638,4	593,0	642,7	467,8	380,8	574,5	591,6
Բանջարանոցային մշակաբույսեր	69,9	70,5	70,7	63,9	58,8	71,1	61,7
Բոստանային մշակաբույսեր	24,7	33,1	33,4	23,3	41,7	49,6	44,5
Կարտոֆիլ	93,1	95,8	96,1	74,6	63,8	95,5	93,8
Պտուղ և հատապտուղ	12,1	3,7	19,6	27,7	30,2	36,6	31,8
Խաղող	56,4	40,7	53,8	45,6	97,0	122,5	82,7
ՀՀ							
Միս (կենդանի քաշով)	28,8	29,6	31,0	36,6	38,2	39,3	39,4
Կաթ	160,5	173,5	185,8	193,8	200,4	206,8	204,1
Ձու, հատ	156,9	175,9	161,9	144,9	164,2	180,0	196,9
Հացահատիկային	96,9	142,8	123,8	66,4	141,4	129,8	117,2
Բանջարանոցային մշակաբույսեր	177,9	187,8	207,4	243,8	264,2	257,9	256,2
Բոստանային մշակաբույսեր	36,1	35,3	36,8	42,2	64,5	56,9	67,5
Կարտոֆիլ	158,6	180,1	176,3	168,6	182,5	202,7	185,5
Պտուղ և հատապտուղ	32,2	35,5	98,6	89,4	81,3	99,3	103,8
Խաղող	25,5	46,5	51,4	62,9	68,4	58,1	65,2

3. Պարենամթերքի արտաքին առևտրի և բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքատեսակների սպառման հիմնախնդիրները ՀՀ-ում

Բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքատեսակների շարժի և դրանց գների ուսումնասիրությունը հնարավոր է իրականացնել, քանի որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից եռամյա կտրվածքով վարվում է այդպիսի վիճակագրություն: Բացի այդ, տվյալների ուսումնասիրությունը վկայում է նաև, թե սպառողական շուկայում այս կամ այն ապրանքատեսակի ռեսուրսն ինչպես է ձևավորվում. ինչպիսին են դրա կառուցվածքը, արտադրության, ներմուծման և արտահանման բաժինները: Ըստ այդմ էլ կարելի է որոշակի պատկերացում կազմել, թե պետությունում վարվող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականություններն ինչպես են նպաստում արտադրության զարգացմանը կամ էլ ներմուծման ավելացմանը և, վերջապես, ինչպիսի՞ն են երկրի հնարավորություններն ու ներուժը որոշակի ապրանքատեսակների արտահանման գործում: Ի դեպ, վերջին ցուցանիշը լավագույնս է բնութագրում նաև երկրի հարաբերական առավելությունները: ՀՀ նման փոքր տարածք և, հետևաբար, սահմանափակ ապրանքային շուկա ունեցող երկրի համար արտահանման հնարավորությունների ավելացման խնդիրներն ու զարգացման հեռանկարները կարևոր նշանակություն ունեն: Մյուս կողմից, ներմուծման բարձր ցուցանիշները վկայում են, որ հայրենական արտադրությունը մեծ հնարավորություններ ունի դրանք փոխարինելու և տեղում արտադրություններ կազմակերպելու համար՝ դրանով իսկ նվազեցնելով երկրի կախվածությունը դրսի մատակարարներից: Անհրաժեշտ է նաև նշել, որ սպառման կառուցվածքում մեծ ներմուծման բաժինը խոսում է այն մասին, որ ներմուծողը դարձել է արտահանող երկրի համար շուկա: Իսկ եթե նկատի ունենանք, որ ՀՀ բնակիչների մի զգալի մասն աշխատում է այն երկրներում, որտեղից ներմուծվում են ամենօրյա օգտագործման կամ սպառման ապրանքատեսակներ, ապա այդ երկրների համար թե՛ մեր սպառումը և թե՛ մեր աշխատուժը կրկնակի օգուտ են բերում և դրանով իսկ նվազեցնում հայրենի երկրի հարաբերական առավելությունները: Այդ հանգամանքը թուլացնում է երկրի տնտեսական հզորությունը, ինչպես նաև նվազեցնում բնակչության կենսամակարդակը և դրա ավելացման հնարավորությունները:

Ուսումնասիրություններից հետևում է, որ ՀՀ ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ապրանքային կառուցվածքում զգալի են պարենի ծավալները (վերջինիս կազմում նկատի ունենք նաև այն գյուղատնտեսական հումքը, որն արդյունաբերական վերամշակումների արդյունքում վերածվում է սննդամթերքի): ՀՀ արտաքին առևտրի 2005-2008թթ. տվյալների համաձայն, պարենի արտահանման ծավալները ՀՀ-ից 2008թ., 2005թ. համեմատ, ավելացել են 174,6%-ով (քաշը տոննաներով՝ 156,1%), իսկ ներմուծման ծավալները՝ 243,3%-ով (քաշը տոննաներով՝ 102,4%): Այլ կերպ ասած, նշված ժամանակա-

հատվածում պարենի ներմուծման աճի տեմպը գերազանցել է արտահանման աճի տեմպին, և առաջանցման գործակիցը կազմել է 139 (քաշը տոննաներով՝ 0,66%): Այսինքն՝ ներմուծման յուրաքանչյուր տոննան ավելի է թանկացել (արժևորվել): ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշների կազմում պարենի ցուցանիշներն ունեցել են այսպիսի պատկեր. 2005թ. ՀՀ-ից արտահանվող ապրանքների ընդհանուր քաշում պարենի «կշիռը» կազմել է 7,6%, արժեքում՝ 11,5%, 2006թ. համապատասխանաբար՝ 8,1%, և 11,7%, 2007թ.՝ 7,7% և 14,7%, իսկ 2008թ.՝ 10,0%, և 18,6%: ՀՀ ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշում պարենի «կշիռը» 2005թ. կազմել է 23,3%, արժեքում՝ 15,6%, 2006թ. համապատասխանաբար՝ 20,8% և 14,1%, 2007թ.՝ 23,9% և 15,1%, իսկ 2008թ.՝ 20,6% և 15,5%: Տվյալները վկայում են, որ պարենի արտահանման և ներմուծման տարբերությունը հօգուտ ներմուծման է. 2008թ. պարենի ներմուծումը գերազանցել է արտահանմանը 127,7 մլն դոլարով և 703,5 հազ. տոննա քաշով:

Արտահանման կառուցվածքում ամենամեծ բաժինն ընկնում է «խմիչքներ» ենթաբաժնին, ինչպես քաշի, այնպես էլ արժեքի առումով: Այսպես, 2005թ. այս ենթաբաժնի չափն ըստ քաշի կազմել է 56,3%, իսկ արժեքի՝ 75,0%-ը, 2006թ. համապատասխանաբար՝ 55,0% և 68,3%, 2007թ.՝ 67,5% և 74,6%, իսկ 2008թ.՝ 63,2% և 73,9%: Արտահանման երկրորդ խոշոր հոդվածը բաժին է ընկնում «Մրգեր և բանջարեղեն», իսկ երրորդ հոդվածը՝ «Կաթնամթերք և թռչնի ձու» հոդվածներին: Բավական է նշել, որ 2008թ. նշված 3 հոդվածներին բաժին է ընկել ՀՀ-ից պարենի արտահանման քաշի 84,4%-ը և արժեքի 82,9%-ը: Ներմուծման կառուցվածքում ամենամեծ բաժինը հասնում է «Հացահատիկ և դրանից պատրաստված մթերք» ենթաբաժնին ինչպես քաշի, այնպես էլ արժեքի տեսանկյունից: Այսպես, 2005թ. այս ենթաբաժնի չափն ըստ քաշի կազմել է 59,3%, իսկ ըստ արժեքի՝ 24,1%, 2006թ. համապատասխանաբար՝ 63,6% և 24,3%, 2007թ.՝ 63,5%, և 25,8%, իսկ 2008թ.՝ 13,7% և 6,2%: 2008թ. նշված 3 հոդվածներին բաժին է ընկել ՀՀ ներմուծված պարենի քաշի 75,8% և արժեքի 41,5%-ը:

Պարենի մեկ այլ դասակարգմամբ, ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման կառուցվածքում գերակշռող է պատրաստի սննդի արտադրանքը, այնուհետև՝ բուսական ծագման արտադրանքը և ապա՝ ընդամենը կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքը:

2005-2008թթ. ՀՀ արտաքին առևտրի հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ պարենին են վերաբերում «Սննդամթերք և կենդանի կենդանիներ», «Խմիչքներ և ծխախոտ» և «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, մեղրամոմ» հոդվածները: Նշված 3 հոդվածներն էլ 2005-2008թթ. ունեցել են աճ, ինչպես ըստ քաշերի, այնպես էլ ըստ արժեքի: Այսպես, 2005թ. նշված հոդվածների բաժինն արտահանման ընդամենի մեջ ըստ քաշի կազմել է 7,8%, ըստ արժեքի 13,9%, 2006թ. համապատասխանաբար՝ 8,3% և 12,8%, 2007թ.՝ 7,8%, և 15,3%, իսկ 2008թ.՝ 10,2% և 18,9%: Ներմուծման կառուցվածքում նշված 3 հոդվածների բաժինը ընդամենի մեջ 2005թ. ըստ քաշի կազմել է 24,7%, իսկ ըստ արժեքի՝ 18,5%, 2006թ. համապատասխանա-

բար՝ 22,1%, և 16.7%, 2007թ.՝ 25,2%, և 18,0%, իսկ 2008թ.՝ 21,9%, և 18,5%:

Պարենի (ըստ ապրանքային խմբերի) արտաքին առևտուրն ԱՊՀ երկրների հետ 2008թ. վկայում է, որ նշված ապրանքախմբերի բաժինն ըստ քաշի արտահանման մեջ կազմել է 14,7%, ըստ արժեքի՝ 53,9%, իսկ ներմուծման մեջ, համապատասխանաբար՝ 2,7%, և 27.6%: Բերված տվյալները վկայում են, որ պարենի արտաքին առևտուրն ԱՊՀ երկրների հետ ավելի ինտենսիվ է, քան մնացած երկրների հետ: Հարկ է նաև ընդգծել, որ ՀՀ-ից ԱՊՀ երկրներ արտահանվող պարենի մեջ զգալի է «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» խումբը, որի բաժինն ընդամենի մեջ 2008թ. կազմել է 77,1%, իսկ ներմուծման մեջ «Հացահատիկներ» խումբը՝ 27,6% [4, էջ 52]:

Սպառողական ապրանքների և, մասնավորապես, բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների (տե՛ս *Աղյուսակ 8*) կազմի և կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես են բաշխվում ստացված հասույթներն արտադրողների և ներմուծողների միջև, երկրի ներսում գործող տնտեսական մեխանիզմները տնտեսությանն ինչպիսի կողմնորոշումներ են հաղորդում և ինչ է խրախուսվում՝ ներմուծո՞ւմը, թե՞ արտահանումը: Կարևոր է նաև նկատել, որ ժամանակի ընթացքում ավելի կարևոր է դառնում «ուշացած» քաղաքականության գինն այն առումով, որ ավելանում են ներմուծման ծավալները և դրա հետ կապված ծախսերը, ինչն էլ հանգեցնում է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի ավելացմանը:

Այսպես, եթե 1996թ. ՀՀ ներմուծվել է 10456,5 տոննա տավարի միս՝ մեկ կիլոգրամը 992 դրամ մանրածախ միջին գնով, ապա 2008թ. այդ թվերը կազմել են համապատասխանաբար՝ 15366,9 տոննա և 1589,9 դրամ (2009թ.՝ 10847,3 տոննա և 1617,9 դրամ), այսինքն՝ 1996-2008թթ. տավարի մսի ներմուծումն ավելացել է շուրջ 1,5 անգամ, իսկ գինն՝ ավելի քան 1,6 անգամ, իսկ 1996-2009թթ.՝ 1,04 անգամ և 1,63 անգամ: Այլ կերպ ասած, եթե 1996թ. ՀՀ բնակչությունը տավարի մսի ձեռքբերման համար ծախսել է 10,373 մլրդ դրամ, ապա 2008թ. այդ մեծությունը կազմել է 24,432 մլրդ դրամ, իսկ 2009թ.՝ 17,550 մլրդ դրամ: Եթե ընդունենք, որ տավարի միս վաճառող առևտրական կազմակերպության առևտրային վերադիրը կազմել է 20%, ապա ստացվում է, որ միայն 2008թ. տավարի մսի ներմուծման համար դրսի շուկաներին վճարվել է ավելի քան 19,545 մլրդ դրամ, 2009թ.՝ 14,040 մլրդ դրամ: Խոզի մսի համար այդ թվերը կազմել են համապատասխանաբար՝ 642,9 տոննա, 1181 դրամ, 7542,5 տոննա, 2542,1 դրամ, 5130,7 տոննա, 2435,3 դրամ, 0,6 մլրդ դրամ, 15,3 մլրդ դրամ, 9,9 մլրդ դրամ, հավի մսի համար համապատասխանաբար՝ 13649,7 տոննա, 962 դրամ, 36213,8 տոննա, 977,2 դրամ, 27576,9 տոննա, 1030,2 դրամ, 10,5 մլրդ դրամ, 28,3 մլրդ դրամ, 22,7 մլրդ դրամ: Այսպիսով, միայն տավարի, խոզի և հավի մսի համար դրսի շուկաներից 1996թ. ներմուծվել է 24749,1 տոննա միս 2008թ.՝ 59123,3 տոննա, 2009թ.՝ 43554,9 տոննա, որի համար 1996թ. վճարվել է 21,5 մլրդ դրամ, 2008թ.՝ 63,1 մլրդ դրամ, 2009թ.՝ 46,6 մլրդ դրամ:

Աղյուսակ 8

ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների ռեսուրսները 2009թ. [4, էջ 52]

N	Ապրանքատեսակներ	Չափի միավոր	2009թ. հունվար-դեկտեմբեր				
			Ներմուծում	Արտադրություն	Արտահանում	Ռեսուրսներ ընդհանուր	Ներքին սպառման ծավալ (ռումբ)
1	2	3	4	5	6	7 = 4 + 5 - 6	8
1	Տավարի միս	տոննա	41147.0[2]	10847.3	164.7	51829.6	1617.9 (կգ)
2	Խոզի միս	-//-	6213.0[2]	5130.75	0.04	11343.7	2435.3 (կգ)
3	Հավի միս	-//-	4911.3[2]	27576.9	0.0	32488.2	1030.2[3] (կգ)
4	Ձուկ	-//-	5858.6	2944.8	19.5	8783.9	2470.0[4] (կգ)
5	Կարագ	-//-	1007.2	1782.8	0.16	2789.8	2387.9 (կգ)
6	Պանիր	-//-	17459.3	587.5	376.9	17669.9	1301.0 (կգ)
7	Սուրճ	-//-	-	13360.1	3334.6	8025.5	2662.3 (կգ)
8	Ցորեն	-//-	198080.3	376825.8	0.0	574906.1	167.7 (կգ)
9	Հաց	-//-	297627.4	-	-	297627.4	(կգ) ըստ տեսակների տես աղ. 6
10	Բրինձ	-//-	-	11070.1	0.05	11070.1	603.0 (կգ)
11	Ալյուր	-//-	130861.2	4157.7	0.0	135018.9	251.1 (կգ)
12	Ձու	մլն հատ	630.1	0.26	4.02	626.3	539.9 (10 հատ)
13	Բուսական յուղ	տոննա	954.2	22461.1	2.1	23368.2	749.1 (լիտր)
14	Մարգարին	-//-	241.6	13399.7	0.0	13641.3	985.3 (կգ)
15	Շաքարա-վազ	-//-	870.0	64824.4	0.05	65694.4	286.8 (կգ)
16	Մակարո-նեղեն	-//-	2433.3	3287.8	8.9	5712.2	438.2 (կգ)
17	Գինի	հազ. լիտր	4372.1	140.96	517.8	3995.3	1315.7 (0.7լ)
18	Էթիլային սպիրտ	-//-	3861.2	396.01	164.5	4092.7	-
19	Կոնյակ	-//-	9869.0	54.93[5]	9227.3[5]	696.6	3823.8 (0.5լ)
20	Օղի	-//-	13090.7	5842.7[5]	91.8[5]	18841.6	1170.2 (0.7լ)
21	Ծխախոտ (սիգարետ)[6]	հազ. տուփ	165520.0	105647.0	28398.5	242768.5	269.9 (տուփ)

N	Ապրանքային մի-ավորումներ	Չափման միավոր	2009թ. հունվար-դեկտեմբեր				
			Ներմուծում	Արտադրություն	Արտահանում	Ներքին սպառում	Ներմուծման ծավալը (ոչ մաքուր)
1	2	3	4	5	6	7 = 4 + 5 - 6	8
22	Բենզին	տոննա	-	183992.0	0.0	183992.0	311.8[7] (լիտր)
23	Դիզելային վառելիք	-//-	-	118024.2	48.55	117975.7	281.8 (լիտր)
24	Էլեկտրաէներգիա	մլն կվտ/ժ	5671.2	295.3	324.8	5641.7	30.0 [8] (կվտ/ժամ)
25	Պլաստմասսայե իրեր	տոննա	7813.8	40351.8	2755.0	45410.6	-

Ծանոթություն.
[1] Ներմուծման և արտահանման ցուցանիշները ներառում են նաև ֆիզիկական անձանց կողմից կազմակերպվող առևտրի տվյալները:
[2] Նշված արտադրատեսակների արտադրության ցուցանիշները բերվում են սպանդային քաշով (հիմնականում արտադրվել են գյուղացիական և բնակչության օժանդակ տնտեսություններում):
[3] Ցուցանիշը ներառում է նաև հավի բուդը:
[4] Ցուցանիշը ներառում է «սիգ» և «իշխան» ձկնատեսակները:
[5] Օդու և կոնյակի քանակական չափի միավորը (հազ. լիտր) հաշվարկված է արտաքին առևտրի բնագավառում ապրանքների դասակարգման 8-նիշ ծածկագրին համապատասխան «լիտր 100% սպիրտ» լրացուցիչ չափի միավորից «40% սպիրտ» չափի միավորին անցման միջոցով: Հետևաբար, այն պարունակում է որոշակի մոտավորություն:
[6] Մեկ տուփի մեջ՝ 20 հատ սիգարետ:
[7] Ցուցանիշն արտացոլում է միայն «ռեգուլյար» բենզինի գինը:
[8] Սկսած 2009թ. ապրիլի 1-ից՝ ցերեկային սակագինը՝ 30 դրամ: Երկսակագնային հաշվիչների առկայության դեպքում գիշերային սակագինը՝ 20 դրամ:

Ակներևության համար, որպեսզի պարզենք, թե 1996, 2008 և 2009թթ. բնակչության սպառման կառուցվածքներում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների ռեսուրսներում ներմուծված սննդամթերքի համար որքան է վճարվում դրսի շուկաներին (թերևս, բրնձից և սուրճից բացի, որը շահավետ չէ հանրապետությունում մշակել, մնացած մթերքներն ու մշակաբույսերը կարող են աճեցվել ՀՀ-ում) կազմվել է *Աղյուսակ 9-ը*: Նշենք, որ աղյուսակում չի ընդգրկված հացը (քանի որ այն չի ներմուծվում), ներմուծվող ապրանքատեսակներից չեն ընդգրկված. սուրճը և թեյը (քանի որ դրանք ՀՀ-ում չեն աճում և արտադրվում), էթիլային սպիրտը (քանի որ պաշտոնական վիճակագրության կողմից չի տրվում էթիլային սպիրտի միավորի մանրածախ միջին գինը): Ծխախոտը թողնվել է ցուցակում, թերևս այն պատճառով, որ վերջինիս արտադրությունը միշտ էլ ընդգրկված է եղել սննդի արդյունաբերության կազմում: 2008թ. այն ապրանքատեսակները, որոնք կարող են արտադրվել ՀՀ-ում, դրսի շուկաներից ներմուծման վրա ծախսվել է շուրջ 235,77 մլրդ դրամ, ինչը 1996թ. համե-

մատ (առանց ձկան և ցորենի արժեքի հաշվառման) ավելացել է 2,8 անգամ: Հավանաբար, եթե նշված գումարի միայն կեսը (շուրջ 118 մլրդ դրամ) ներդրվեր գյուղատնտեսության և վերամշակող ճյուղի մեջ, կստեղծվեին հազարավոր նոր աշխատատեղեր և տնային տնտեսությունները զգալիորեն կբարելավեին իրենց եկամուտները: Ասվածի լավագույն օրինակը Գյումրիում կառուցվող շաքարի արտադրության գործարանն է: Գործարանի շահագործմամբ տեղում կաշխատեն 1200 աշխատող, իսկ շուրջ 3,5 հազար գյուղացիական տնտեսություններ կզբաղվեն շաքարի ճակնդեղի մշակությամբ:

Տվյալների համաձայն, 1996թ. համեմատ 2008թ. նվազել են միայն կարագի, պանրի, ձվի, գինու և կոնյակի ներմուծումները: Մնացած ապրանքատեսակների համար ավելացել են ներմուծումների ծավալները: 2009 ճգնաժամային տարում 1996թ. համեմատ նվազել են կարագի, ալյուրի, ձվի և կոնյակի ներմուծումների ծավալները, իսկ 2008թ. համեմատ նվազել են 11 ապրանքատեսակների ներմուծումների ծավալները, և միայն 6 ապրանքատեսակների (ձուկ, ցորեն, ալյուր, մարգարին, գինի, կոնյակ) համար նկատվել է ներմուծման ծավալների ավելացում:

ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների կազմում ներմուծվող սննդամթերքի տեսակներից նվազագույն սպառողական զամբյուղի կազմում ընդգրկված են. հացամթերքներում՝ ալյուրը, ցորենը, հացը, մակարոնեղենը, բրինձը, մսամթերքի կազմում՝ տավարի միսը, կաթնամթերքներում՝ կենդանական յուղը (կարագը), պանիրը, շաքարը, ձուն, բուսական յուղը, մարգարինը, ձուկը: Այսինքն՝ ՀՀ նվազագույն սպառողական զամբյուղի մեջ են ընդգրկված բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակներից 13-ը: Նվազագույն սպառողական զամբյուղի մեջ ընդգրկված ներմուծվող ապրանքատեսակների կշիռները տոկոսներով (2009թ. համար) ընդամենը ռեսուրսներում այսպիսին է. տավարի միս՝ 20,9, ձուկ՝ 33,5, կարագ՝ 63,9, պանիր՝ 3,3, ցորեն՝ 65,5, բրինձ՝ 100,0, ալյուր՝ 3,1, ձու՝ 0,04, բուսական յուղ՝ 95,9, մարգարին՝ 98,2, շաքարավազ՝ 98,7, մակարոնեղեն՝ 57,6: Նշված ցանկի առաջին երեք (չորս) տեղերը զբաղեցնում են բրինձը, շաքարավազը, մարգարինը, բուսական յուղը: Եթե բրնձի արտադրությունը, ելնելով բնակլիմայական պայմաններից, ՀՀ-ում նպատակահարմար չէ, ապա մարգարինի ու բուսական յուղի արտադրության համար մեզանում կան բոլոր պայմանները (համարում ենք, որ շաքարի արտադրության կազմակերպման խնդիրը Հայաստանում լուծվելու է Շիրակի մարզում շաքարի արտադրության գործարանի գործարկումից հետո): Ինչպես առաջնահերթ կարգով մարգարինի և բուսական յուղի, այնպես էլ նվազագույն սպառողական զամբյուղի մեջ ընդգրկված մյուս պարենամթերքների տեղական արտադրությունների կազմակերպումը, ներմուծումը փոխարինելու և պարենի նկատմամբ բնակչության նվազագույն պահանջմունքները բավարարելու ամենաարդյունավետ ճանապարհն է, որն ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև ազգային անվտանգությանն առնչվող կարևորություն:

Աղյուսակ 9

ՀՀ բնակչության սպառման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող 25 ապրանքատեսակների կազմում ներմուծվող սննդամթերքի ծավալները, միավորի գները, ստացված հասույթը և դրսի շուկաներին վճարված արժեքը [4, էջ 52, 5, էջ 58, 6, էջ 51]

N	Սպառողական զամբյուղի ապրանքատեսակներ	Չափի միավոր	1996թ.			2008թ.			2009թ.		
			Ներմուծում ընդհանուր	Մատակարարում տարվա ընթացքում միջին գնով (ներառյալ վճարումը դրսի շուկաներին) դրամ	Վճարվել է դրսի շուկաներին, դրամ մեկ կգ դիմաց	Ներմուծում ընդհանուր	Մատակարարում տարվա ընթացքում միջին գնով (ներառյալ վճարումը դրսի շուկաներին) դրամ	Վճարվել է դրսի շուկաներին, դրամ մեկ կգ դիմաց	Ներմուծում ընդհանուր	Մատակարարում տարվա ընթացքում միջին գնով (ներառյալ վճարումը դրսի շուկաներին) դրամ	Վճարվել է դրսի շուկաներին, դրամ մեկ կգ դիմաց
1	2	3	4	5	6 (4x5 x0,8)	7	8	9 (7x8 x0,8)	10	11	12 (10x11 x0,8)
1	Տավարի միս	տոննա	10456,5	992 կգ	10,4	15366,9	1589,9 կգ	19,5	10847,3	1617,9 կգ	14,0
2	Խոզի միս	տոննա	642,9	1181 կգ	0,6	7542,5	2542,1 կգ	15.3	5130,7	2435,3 կգ	9,9
3	Հավի միս	տոննա	13649,7	962 կգ	10,5	36213,8	977,2 կգ	28,3	27576,9	1030,2 կգ	22,7
4	Ձուկ	տոննա	72,3	-	-	1999,6	2152,7 կգ	4,3	2944,8	2470,0 կգ	5,8
5	Կարագ	տոննա	5800,7	1471 կգ	8,5	4581,3	2331,9 կգ	10,7	1782,8	2387,9 կգ	3.4
6	Պանիր	տոննա	816,6	1123 կգ	0,7	760,0	1295,1 կգ	0,8	587,5	1301,0 կգ	0,6
7	Ցորեն	տոննա	134814,9	-	-	297735,5	188,7 կգ	44,9	376825,8	167,7 կգ	50,5
8	Ալյուր	տոննա	104602,2	214 կգ	22,4	18958,0	286,7 կգ	4,3	4157,7	251,1 կգ	0,8
9	Ձու	մլն հատ	133,6	476 (10հատ)	0,6	1,5	558,9 (10հատ)	0,07	0,26	530,9 (10հատ)	0,0
10	Բուսական յուղ	տոննա	14500,5	524 լ	6,1	22659,3	998,3 լ	18,1	22416,1	749,1 լ	13,4
11	Մարգարին	տոննա	2835,5	711 կգ	1,6	7196,3	966,8 կգ	5,6	13399,7	985,3 կգ	10,6
12	Շաքարավազ	տոննա	62378,4	266 կգ	13,3	102263,0	242,3 կգ	19,8	64824,4	286,8 Ї·	14,8
13	Մակարոնեղեն	տոննա	14860,0	280 կգ	3,3	3499,6	470,4 կգ	1,3	3287,8	438,2 կգ	1,1
14	Գինի	հազ. լիտր	466,2	216 (0,7լ)	0,1	207,7	1305,8 (0,7լ)	0,3	140,9	1315,7 (0,7լ)	0,1
15	Կոնյակ	հազ. լիտր x 100% սպ. [1]	82,158	907 (0,5լ)	0,4	15,9	3493,7 (0,5լ)	0,2	54,9	3823,8 (0,5լ)	0,2
16	Օղի	հազ. լիտր x 100% սպ. [1]	3048,701	295 (0,5լ)	3,6	9007,5	1160,2 (0,7լ)	29,3	5842,7	1170,2 (0,7լ)	5,5
17	Ծխախոտ	հազ. տուփ	55747	56 տուփ	2,5	155398,1	265,5 տուփ	33,0	105647,0	269,9 տուփ	22,8
	Ընդամենը				**84,6**			**235,77**			**176,608**

[1] Ընդունվել է, որ մեկ լիտր 100%-անոց սպիրտից կարելի է ստանալ 0,5 լիտր տարողության 5 շիշ խմիչք:

Աղյուսակներ 10 և 11-ում ներկայացված են վերջին տարիների ընթացքում ՀՀ ներմուծվող և հանրապետությունից արտահանվող պարենամթերքի ֆիզիկական ծավալների մասին տեղեկությունները:

Աղյուսակ 10/11

Պարենամթերքի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն և արտահանումը [7, էջ 67, 8, էջ 68, 69], տոննա

Անվանումը	2004	2005	2006	2007	2008	2009
Ներմուծումը ՀՀ						
Ցորեն	384607.9	319087.1	305513.1	421184.9	297735.5	376825.8
Ալյուր	14596.9	1795.0	584.9	750.8	20407.7	4157.7
Բրինձ	14494.8	17483.4	20307.1	29321.7	16074.3	11071.0
Մակարոնեղեն	2835.5	3311.4	2849.7	3981.6	3499.6	3287.8
Շաքար	74875.5	103269.4	56771.2	87846.9	102263.0	64824.4
Բուսական յուղ	13220.4	18628.6	19311.1	22885.2	22643.7	22416.1
Ձու	44.7	41.3	439.6	111.0	98.5	15.4
Թռչնի միս	119.2	14852.5	8001.8	26480.8	38284.7	28144.6
Տավարի միս	10863.2	9528.3	10106.9	6063.6	15366.9	10847.3
Խոզի միս	2134.9	2760.9	3200.1	2588.6	7542.5	5130.7
Կաթ (բոլոր տեսակները)	3866.5	3837.0	3443.6	5224.4	3494.0	4227.7
Կարագ	5268.4	3999.5	2644.8	1992.6	4581.3	1782.8
Պանիր	493.5	551.6	694.7	877.3	760.0	587.5
Բանջարեղեն	9004.3	10320.7	14479.5	19721.6	17267.9	14672.2
որից՝ կարտոֆիլ	1553.3	915.1	1705.0	6046.1	4280.5	857.3
Միրգ (ներառյալ ընկուզապտուղներ)	17167.9	22373.8	22822.0	30353.9	27125.9	24745.7
որից՝ խաղող	894.5	924.8	1140.3	447.6	456.2	959.5
բոստանային մշակաբույսեր	313.6	363.7	584.5	460.1	554.0	142.1
Արտահանումը ՀՀ-ից						
Կոնյակ	10824.0	16125.5	14806.3	23993.2	27643.4	17002.2
Գինի	382.6	513.4	632.8	1316.0	851.0	909.9
Հանքային ջուր	4520.1	6342.2	10610.0	13679.4	14448.6	7886.9
Միրգ (ներառյալ ընկուզապտուղներ)	2497.2	6846.5	10960.1	3515.8	12246.4	17225.7
որից՝ խաղող	324.8	586.9	954.1	1706.5	2871.9	3743.8
Պանիր	1026.3	2292.7	936.9	567.2	473.8	376.9
Ձու	2703.2	711.6	500.9	135.3	170.9	239.8

Շարունակելի

Աղբյուրներ և գրականություն

1. World Development indicators 2009, World Bank, 2010.
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2009, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009թ.:
3. Словарь современной экономической теории Макмиллана, М., ИНФРА-М, 2003.
4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2010թ.:
5. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2000թ.:
6. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009թ.:
7. Պարենային ապահովություն և աղքատություն. 2008 թվականի հունվար-դեկտեմբեր, Եր., ՀՀ ԱՎԾ, 2009թ.:
8. Պարենային ապահովություն և աղքատություն. 2009 թվականի հունվար-դեկտեմբեր, Եր., ՀՀ ԱՎԾ, 2010թ.:
9. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն, հաստատվել է ՀՀ նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով:
10. *Հարությունյան Է.Գ.,* Տնտեսական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգում, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2008թ.:
11. *Մարկոսյան Ա.,* Տնտեսական անվտանգություն. հիմնախնդիրները. մեթոդաբանություն և արդյունքներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2005թ.:
12. Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997.
13. Указ Президента РФ от 1 февраля 2010 года “Об утверждении Доктрины продовольственной безопасности Российской Федерации”, www.kremlin.ru
14. Արզումանյան Ա., Մրցունակ բիզնեսի հիմնական գծերը և զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2010թ.:

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ПРОДОВОЛЬСТВЕННОЙ БЕЗОПАСНОСТИ

Ашот Маркосян, Макар Петросян

Резюме

Одной из важнейших задач современного государства является создание соответствующей инфраструктуры и рычагов регулирования с целью обеспечения своих граждан продуктами потребления. Исследуя тенденции развития потребительского рынка и уровень цен на основные продукты потребления, можно

наиболее четко представить положение дел в конкретной стране в деле продовольственной обеспеченности как страны в целом, так и различных слоев населения.

Продовольственная обеспеченность – такое социально-экономическое состояние страны, при котором любой житель имеет возможность приобретать необходимый для обеспечения прожиточного минимума набор пищевых продуктов.

В статье обсуждаются проблемы, касающиеся характеристики продовольственной безопасности; стоимости и состава продовольственной и минимальной потребительских корзин, уровня продовольственной обеспеченности населения РА и НКР, показателей, характеризующих местное производство и степень самообеспечения важнейшими продуктами питания, включенными в национальный продовольственный баланс РА, показателей по экспорту и импорту продовольствия.